Մխիթար Գոշ

Վազը և Մորենին

Գարնանը, երբ վազը որթակոտոր էր եղել և արտասվում էր, եկան բոլոր տունկերը նրան մխիթարելու, նրանց հետ եկավ նաև մորենին:

Մի լար, ասում են, դարձյալ զավակներ կծնես:

Եվ նա պատասխանում է.

Կծնեմ, և դարձյալ կկոտորեն, և դա ի՞նչ մխիթարություն է: Մխիթարանքն այն է, որ իմ կենդանի մնացած որդիները պտուղ կտան և մարդկանց ուրախության պատճառ կդառնան:

Եվ սրանով էր վազը մխիթարում իրեն:

Իսկ մորենին ասում է,

Եկա քեզ մխիթարելու, որ ինձանով սրբես աչքերդ:

Շնորհակալ եմ այգեգործից, որ պոկում է քեզ իմ արմատից, պատասխանում է վազը:

Առակս հայտնում է, որ պետք է միառժամանակ մխիթարվել կենդանի մնացածներով, որ մահկանացու է մարդկային ցեղը, և իսկական մխիթարությունն այն է, որ կենդանի մնացած ժառանգները լինեն տիրոջը հաճելի: Բայց անմիտների խոսքը, ինչպես մորենունը, ավելի զայրացնող է, քան՝ մխիթարություն սգավորին, որ շնորհակալ կլինի, եթե բոլորովին չտեսնի անմիտ

մխիթարիչին։